ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Անդրանիկ Մարգարյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2025 թվականի հուլիսի 28-ից 30-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը՝ ՌԴ Ֆինանսների նախարարության գիտահետազոտական ֆինանսական ինստիտուտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման հիմնական նպատակն էր մասնակցել ՀՀ և ՌԴ ֆինանսների նախարարությունների միջև 2023-2025թթ. երկկողմ համաձայնագրի 2025թ. միջոցառումների ծրագրով նախատեսված՝ ՌԴ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվող «ՀՆԱ ծախսային բաղադրիչների և տնտեսության ճյուղերի կանխատեսման նոր համակարգի մշակում», «Պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելային նոր համակարգի մշակում» և «Մակրոտնտեսական ցուցանիշների միջնաժամկետ կանխատեսման կիսակառուցվածքային մոդելի (semi-structural gap/SSGM) մշակում և ներդրում» թեմաներով դասընթացներին: Դասընթացի շրջանակներում ներկայացվել են ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչներից արտահանման և ներմուծման մոդելավորման, կարճաժամկետ կանխատեսումների (Nowcasting) համակարգի, ինչպես նաև BVAR մոդելներով հարկային ռիսկերի գնահատման համակարգի մշակման շրջանակներում կատարված աշխատանքները:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի շրջանակներում ներկայացվել են հետևյալ թեմաները՝

- ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչներից արտահանման և ներմուծման մոդելավորում
- Կարճաժամկետ կանխատեսումներ (հատկապես՝ MIDAS մոդելներ)
- Հարկային ռիսկերի գնահատման BVAR մոդելներ

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աշխատանքային հանդիպում է տեղի ունեցել ՌԴ Ֆինանսների նախարարության Բյուջետային քաղաքականության և ռազմավարական պլանավորման դեպարտամենտի տնօրեն Եվգենի Դոմբրովսկիի և Մակրոտնտեսական քաղաքականության բաժնի պետ

Իրինա Գոպտայի հետ, որի շրջանակներում քննարկվել են ՀՀ ֆինանսների նախարարությունում դեռևս մշակման փուլում գտնվող մակրոտնտեսական ցուցանիշների միջնաժամկետ կանխատեսման կիսակառուցվածքային մոդելի (semi-structural gap/SSGM) առանձնահատկությունները, ինչպես նաև ՌԴ ֆինանսների նախարարությունում նախատեսվող մոդելային համակարգի զարգացման ուղղությունների առանձնահատկությունները:

Վերոնշյալ գործիքակազմի մշակման և կիրարկման մասին հանդես եմ եկել ելույթով և ներկայացրել ՀՀ փորձը մակրոտնտեսական մոդելավորման շրջանակում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Անդրանիկ Մարգարյան

31 հուլիսի, 2025թ.